ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե-11

# ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «21» 01 2020 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեն, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահի Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ ակադ. Մ.Գ.Մանվելյանի անվ. Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտը, (ՀՀ ԳԱԱ ԸԱՔԻ) ի դեմս տնօրեն Կարեն Գրիգորյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), " ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԻՑ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻՑ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ " ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

**1.1.** Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված 121768,3(Մեկ հարյուր քսան մեկ միլիոն յոթ հարյուր վաթսուն ութ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

**1.2** Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

## 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

**2.1** Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի **2.4** կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

**2.2** Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Կոմիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

**2.3** Կոմիտեն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

**2.4** Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,

2.4.6 Կոմիտե ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Կոմիտե ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

## 3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է _121768,3 (Մեկ հարյուր քսան մեկ միլիոն յոթ հարյուր վաթսուն ութ հազար երեք հարյուր ) ՀՀ դրամ:

*(թվերով և բառերով)*

## 4 Մոնիթորինգ

**4.1** Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

**4.2** Մոնիթորինգն իրականացվում է Կոմիտեի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

**4.3** Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

**4.4** Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

## 5 Վճարման կարգը և ժամկետները

**5.1** Կոմիտեն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

**5.2** Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

## 6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Կոմիտեն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

## 7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

## 8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ նախագահություն

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24

Հ/հ 900011024115

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՎՀՀ 00005673

Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան

(ստորագրություն)

Կ. Տ.

Ընդհանուր և անօրգանական քիմիայի

ինստիտուտ, ՊՈԱԿ

Արդության փ. 2 նրբ., տուն 10

Հ/հ 900018005703

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՎՀՀ 00007282

Տնօրեն ՝Կ.Գրիգորյան

(ստորագրություն)

Կ. Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ (ստորագրություն) Կարեն Գրիգորյան (անուն ազգանուն)

Հավելված N 1
«21» 01 2020 թ.
N Ե-11 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն Կարեն Գրիգորյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «21» 01 2020 թ. N Ե-11 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 121768,3(Մեկ հարյուր քսան մեկ միլիոն յոթ հարյուր վաթսուն ութ հազար երեք հարյուր ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ նախագահություն

Նախագահ՝ ______________

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ

Տնօրեն՝ ______________

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 2
«21» 01 20.. թ.
N Ն-11 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ
ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԻՑ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻՑ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ծրագրի

*(ծրագրի անվանումը)*

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

1. Ֆուկցիոնալ նշանակության նոր նյութերի սինթեզը, հատկությունների ուսումնասիրությունը և շահավետ տեխնոլոգիաների մշակումը:

2. Նանոչափի նյութերի և դրանց հիմքով նանոկոմպոզիտների ստացումը և ուսումնասիրությունը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Աշխատանքը կատարվելու է ըստ օրացուցային պլանի և նշված ժամկետներում կներկայացվեն հաշվետվություններ: Եթե որևէ աշխատանք ըստ օրացուցային պլանի չի կատարվում օբյեկտիվ պատճառներով, ապա անհրաժեշտ է տեղեկացնել պատվիրատուին՝ հիմնավորելով այն: Այս դեպքում չկատարված աշխատանքը անհրաժեշտ է փոխարինել ընդհանուր խնդրի հետ տրամաբանորեն կապված նույն ծավալով մեկ այլ փուլի

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Հանրապետության տնտեսության զարգացման համար տեղական հումքի, անօրգանական բազմակոմպոնենտ համակարգերի հիմքով բարելավված հատկություններով նյութերի, նանոչափ մասնիկների, կոմպոզիտների ստացում և տեխնոլոգիաների մշակում:

- Ալյումին պարունակող տեղական հումքից, արտադրական թափոններից և տեխնիկական արգնահողից բարձր և հատուկ մաքրության ալյումինի հիդրօքսիդի և օքսիդի ստացման ֆիզիկա-քիմիական հիմունքների ուսումնասիրություն և տեխնոլոգիաների մշակում:

- Սուլֆիդային հանքանյութից հիդրոմետալուրգիական եղանակով պղնձի, մոլիբդենի, երկաթի և այլ մետաղների խտանյութերի ստացման նոր տեխնոլոգիաններ մշակում:
- Եռավալենտ մետաղների վոլֆրամային պոլիօքսիմետաղների β-միջուկների սինթեզ, հատկությունների ուսումնասիրություն, կենսաբանորեն ակտիվ նյութերի մշակում և դրանց կիրառման հեռանկարների բացահայտում:
- Նանոչափի նյութերի, ֆունկցիոնալ նշանակության ամորֆ և բյուրեղային կառուցվածքով նոր բաղադրության նանոկոմպոզիտների ստացման պայմանների, կիրառման բնագավառների հետազոտում:
- Հրաբխային ապարների թափոններից կոնստրուկցիոն նյութերի մշակում միկրոալիքային սինթեզի եղանակով
- Օքսիհալոգենիդային համակարգերի հիմքով նոր բաղադրության, ֆիզիկաքիմիական և օպտիկական հատկությունների փոփոխության լայն տիրույթով ապակիների, ապակեկերամիկական նյութերի, անօրգանական կապակցողների սինթեզ և տեխնոլոգիաների մշակում:
- Բաց համակարգերում մոդիֆիկատորների ներմուծմամբ պինդ լուծույթների առաջացման, ֆազերի փոխարկման ջերմաստիճանի, բյուրեղացման ընթացքի վրա դրանց ազդեցության տեսական հիմունքների և օրինաչափությունների բացահայտում, կոմպոզիտային նյութերի ստացման նոր տեխնոլոգիայի մշակում:
- Սերպենտինացված ապարներից մագնեզիումի միացությունների ստացման ջերմաքիմիական մշակման տեխնոլոգիայի կատարելագործում, սիլիկաժելի հիման վրա ֆունկցիոնալ նշանակության միացությունների սինթեզ:
- Գերկարծր, քիմիապես կայուն ծածկույթների ստացման մեխանաքիմիական եղանակի մշակում:
- Դիոպսիդային և մուլիտային միացությունների կառուցվածքով ճառագայթակայուն, բարձր ջերմաստիճաններում գույների մեծ ինտեսիվությամբ, ապակեկերամիկական ծածկույթների և պիգմենտների ստացում հիմնասիլիկատային ապարների միկրոալիքային մշակման եղանակով:
- Զոլ-ժել եղանակով ջերմակայուն, էլեկտրամեկուսիչ կոմպոզիտային նյութերի ստացում և հատկությունների ուսումնասիրություն:
- Ալյումասիլիկատային հիմքով նոր սերնդի լյումինաֆորների սինթեզ, լուսարձակման բարձր պայծառությամբ և երկարատևությամբ:

- Հոսքաջրերի, նավթի և նավթամթերքների խառնուրդներից, մաքրմանն ուղղված հետազոտություններ նոր բաղադրության ալյումասիլիկատային սորբենտների կիրառմամբ :
- Բարելավված ամրային հատկություններով կապակցող նյութի ստացում ՀՀ աղքատ գիպսային հանքերից: K, Ca, Fe, P պարունակող Հայաստանի բնական հումքից պարարտանյութերի ստացում:
- Cs, Rb, Sr և B-ի իզոտոպների նկատմամբ բարձր սորբցիոն ընտրողականությամբ օժտված հանքային և ածխային սորբենտների և իոնափոխանակիչների սինթեզ և ուսումնասիրություն:
- Մշակել պղնձի օքսիդացած հանքանյութերից ֆլոտացումով պղնձի կորզումը և տեխնոլոգիական հիմունքները:
- Գազաֆազ շղթայական ռեակցիաների ազդեցության պայմաններում պնդաֆազ անօրգանական նյութերի քիմիական հետերաֆազ փոխարկումների (ՇՌԱ-եղանակ) ուսումնասիրություններ:
- ՀՀ հանքային շրջանների և դաշտերի բնապահպանական գնահատման և մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի երկրաքիմիական համալիր որոնումների եղանակների մշակում:

Կազմակերպության տնօրեն՝ ______________________ Կարեն Գրիգորյան
(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ ______________________ Կարեն Գրիգորյան
(ստորագրություն)

Հավելված N 3
«21» 01 2020 թ.
N Ռ-11 պայմանագրի

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

## ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԻՑ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻՑ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ " ծրագրի

| հ/հ | Իրականացվելիք միջոցառման | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | համառոտ բովանդակությունը | կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները | կատարման ժամկետները | պահանջ գումար (հազա դրամ) |
| | Նոր տեխնոլոգիաների մշակում, ֆունկցիոնալ նշանակության նոր նյութերի ստացում Երկրաքիմիական հետազոտություններ | Նոր նյութերի սինթեզ, հատկությունների և կառուցվածքի ուսումնասիրություն | Փորձարկումներ, Ֆիզ-քիմ հատկությունների ուսումնասիրում | հոդվածների տպագրում, արտոնագրերի ձևակերպում, | 1-ին եռամսյակ | 24353,6 |
| | Տեղական հումքից նանոկառուցվածքային նյութերի ստացում և ուսումնասիրություն | Սինթեզ, հատկությունների ուսումնասիրություն | Համալիր վերամշակում | հոդվածների տպագրում, արտոնագրերի ձևակերպում | 2-րդ եռամսյակ | 30442,07 |
| | Բաց համակարգերում ֆազային դիագրամների պինդ,լլուծութների առաջացման, ֆազերի բյուրեղացման ընթացքի հետազոտություն; Ամորֆ և բյուրեղային նյութերի փոխարկումների տեսական հիմունքների և օրինաչափությունների բացահայտում: | Տեսական և փորձնական ուսւմնասիրություններ | Փորձարկումներ, Ֆիզ-քիմ հատկությունների ուսումնասիրում | հոդվածների տպագրում,գիտաժողովի անցկացնում | 3-րդ եռամսյակ | 30442,07 |
| | Նյութերի ստացման նոր եղանակների և բազմակոմպոնենտ համակարգերում ֆազային փոխարկումների օրինաչափությունների կիրառմամբ նոր նյութերի և տեխնոլոգիաների մշակում: | Սինթեզ, հատկությունների ուսումնասիրում | Ֆիզ-քիմ հատկությունների ուսումնասիրում | | 4-րդ եռամսյակ | 36530,5 |
| Ընդամենը | | | | | | 121768.3 |

Կազմակերպության տնօրեն` ____________ Կարեն Գրիգորյան
(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար ____________ Կարեն Գրիգորյան

ՀավելվածN 4
«21» 01 2020 թ.
N Ա-11 պայմանագրի

# ՆԱԽԱՀԱՇԻՎ

**"ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԻՑ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻՑ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ "** ծրագրի

*(ծրագրի անվանումը)*

*հազար դրամ*

| Հ/հ | Հոդվածի անվանումը | Ֆինանսավորման ծավալը | այդ թվում՝ | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին եռամսյակ (20%) | 2-րդ եռամսյակ (25%) | 3-րդ եռամսյակ (25%) | 4-րդ եռամսյակ (30%) |
| 1 | աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը | 102500.0 | *20500.0* | *25625.0* | *25625.0* | *30750.0* |
| 2 | տնտեսական և այլ ծախսեր* | 19268.3 | *3853.7* | *4817.1* | *4817.1* | *5780.5* |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | **121768.3** | **24353.7** | **30442.1** | **30442.1** | **36530.5** |

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ ____________ (Կ. Գրիգորյան)
*(ստորագրություն)* *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ ____________ (Մ. Քոչարյան)
*(ստորագրություն)* *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը*

Հավելված N 4.1
«21» 01 20.. թ.
N Ե-11 պայմանագրի

# ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ *

| Հ/հ | Ծախսերի անվանումը | Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ) |
|---|---|---|
| 1 | Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝ | 11838.0 |
| | *էլեկտրաէներգիայի ծառայություն* | *10000.0* |
| | *գազի ծառայություն* | - |
| | *ջրամատակարարման ծառայություն* | *800.0* |
| | *կապի ծառայություն* | *894.0* |
| | *աղբահանություն* | *144.0* |
| 2 | Գույք | 300.0 |
| 3 | Սարքեր և սարքավորումներ | 800.0 |
| 4 | Նյութեր | 820.0 |
| 5 | Գործուղումներ | 750.0 |
| 6 | Գիտական միջոցառումների կազմակերպում | - |
| 7 | Արշավախմբեր | - |
| 8 | Հրատարակման ծախսեր | - |
| | ....... | 4760.3 |
| Ընդամենը | | **19268.3** |

Կազմակերպության տնօրեն՝ ____________ (Կ. Գրիգորյան ____________)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝ ____________ (Մ. Քոչարյան ____________)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կ.Տ.

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում*

Հավելված N 5
«_____» _____________ 2020 թ.
N ____________________ պայմանագրի

# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԻՑ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻՑ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ծրագրի

*(ծրագրի անվանումը)*

| Հ/հ | Ազգանուն, անուն, հայրանուն | Պաշտոն | Գիտական աստիճան | Ամսական աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Գրիգորյան Կարեն Գագիկի | Տնօրեն,լաբ.վար. | տ.գ.թ. | 185.0 |
| 2 | Կնյազյան Նիկոլայ Բաբկենի | Փոխտնօր., լաբ.վար. | տ.գ.դ. | 160.0 |
| 3 | Մարգարյան Դավիթ Հենրիխի | Փոխտնոր. | | 115.0 |
| 4 | Մանուկյան Գոհարիկ Գաբրիելի | Գիտ.քարտուղ. | տ.գ.թ. | 110.0 |
| 5 | Քոչարյան Մարիամ Մարտինի | Գլխավ. Հաշվ. | | 170.0 |
| 6 | Մախյան Համեստ Արամայիսի | Ավագ հաշվ. | | 89.6 |
| 7 | Արնյան Ռոմիկ Ջորկինի | Ինժ.,1-ին բաժ.վ., գանձապ. | | 89.6 |
| 8 | Աբրահամյան Ժաննա Մատունի | Ընդ. Բաժ.պետ | | 105.0 |
| 9 | Աբրահամյան Աշոտ Վազգենի | Իրավախորհրդ. | | 126.0 |
| 10 | Սահակյան Մարիետա Նավասարդի | Գրադ. վարիչ | | 89.6 |
| 11 | Ղանդիլյան Արայիկ Ռազմիկի | Համակ.ծառ. դեկ | | 45.5 |
| 12 | | Պահեստապետ | | 45.5 |
| 13 | Կիրակոսյան Մանվել Մկրտիչի | Փականագործ | | 89.6 |
| 14 | Մխիթարյան Հակոբ Անդրանիկի | Էլեկտրիկ | | 89.6 |
| 15 | Ցավրյան Արմեն Հուսիկի | Վարպետ | | 89.6 |
| 16 | Պապյան Լիլիթ Ալբերտի | հավաք | | 92.6 |
| 17 | Մելքոնյան Մարգարիտա Հոմերոսի | հավաք | | 92.6 |
| 18 | Հայրիյան Էլզա Քրիստոֆորի | Լաբ. վարիչ | Ք.գ.թ. | 95.0 |
| 19 | Կարապետյան Արմինե Արամայիսի | Գիտ. Աշխ. | | 89.6 |
| 20 | Օհանյան Նատելլա Ալեքսանդրի | Գիտ. Աշխ | | 89.6 |
| 21 | Միրզոյան Լաուրա Անտոնի | Գիտ. Աշխ | | 89.6 |
| 22 | Բաղդասարյան Լիլիթ Սիմոնի | Կրտ.գիտ. Աշխ | | 92.6 |
| 23 | Կոստանյան Արամ Կոստանի | Լաբ. վարիչ | Տ.գ.թ. | 114.0 |
| 24 | Սարգսյան Կարինե Արարատի | Գիտ.աշխ. | | 89.6 |
| 25 | Կարախանյան Գոհար Սուրենի | Գիտ.աշխ | | 89.6 |
| 26 | Մանուկյան Հասմիկ Գարուշի | Ավագ. Գիտ. Աշխ. | Ք.գ.թ. | 89.6 |
| 27 | Ավագյան Անդրանիկ Նիկոլայի | Գիտ. Աշխ. | | 89.6 |
| 28 | Գորգենյան Նինել Վաղինակի | Լաբ.վարիչ | Տ.գ.թ. | 98.0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 29 | Ստեփանյան Ցոլակ Ռուբենի | Գիտ.աշխ. | | 45.5 |
| 30 | Կոստանդյան Մելիդա Ֆրունզեի | Գիտ.աշխ. | | 89.6 |
| 31 | Գրիգորյան Աիդա Եղիազարի | Գիտ. Աշխ. | | 89.6 |
| 32 | Մարտիրոսյան Աննա Վալերիկի | Կրտ. Գիտ. Աշխ. | | 92.6 |
| 33 | Վարդանյան Նվարդ Կարապետի | լաբորանտ | | 92.6 |
| 34 | Գալոյան Կարինե Կարլենի | Գիտ. աշխ | | 89.6 |
| 35 | Կումկումաջյան Ելենա Վիկտորի | Ավագ գիտ. Աշխ. | | 89.6 |
| 36 | Խաչատրյան Ազատուհի Արմենակի | Գիտ. Աշխ. | | 89.6 |
| 37 | Սահարունյան Ալիսա Սերգեյի | Գիտ. Աշխ. | | 89.6 |
| 38 | Մկրտչյան Սվետլանա Տիրանի | Ավագ լաբոր. | | 89.6 |
| 39 | Թորոյան Վահան Պետրոսի | Գիտ. աշխ | | 89.6 |
| 40 | Գիրգորյան Տաթևիկ Վասակի | Գիտ. Աշխ. | | 92.6 |
| 41 | Ապրեսյան Լեյլի Պավելի | Գիտ. Աշխ. | | 89.6 |
| 42 | | Կ.գ.ա. | | 47.0 |
| 43 | Գասպարյան Լուսինե Ալբերտի | Գիտ. Աշխ. | | 47.0 |
| 44 | Ջուլումյան Նշան Հովհաննեսի | Լաբ. վարիչ | Ք.գ.դ. | 140.0 |
| 45 | Իսահակյան Աննա Ռաֆայելի | Առաջ..գիտ. աշխ. | Տ.գ.թ. | 89.6 |
| 46 | Ղազանչյան Աիդա Մարտիրոսի | Գիտ.աշխ. | | 89.6 |
| 47 | Սեմերջյան Հովհաննես Սարգսի | Գիտ. Աշխ. | | 89.6 |
| 48 | Հովսեփյան Թամարա Հակոբի | Գիտ. աշխ | | 89.6 |
| 49 | Հավհաննիսյան Նելլի Վարազդատի | Ավագ լաբ. | | 89.6 |
| 50 | Թերզյան Աննա Միհրանի | Ա.գ.ա. | Տ.գ.թ. | 92.6 |
| 51 | Բեգլարյան Հայկ Ալեքսանի | Ա.գ.ա. | Ք.գ.թ | 92.6 |
| 52 | Մելիքյան Ստելլա Արթուրի | Կ.գ.ա. | | 47.0 |
| 53 | Թաթարյան Աշոտ Ալբերտի | Խմբ. Ղեկ. | Տ.գ.թ. | 45.5 |
| 54 | Հարությաե ՎեներաՌաֆիկի | Գիտ.աշխ. | | 89.6 |
| 55 | Բաղրամյան Վոլոդյա Վազգենի | Լաբ. վարիչ | Տ.գ.թ. | 103.0 |
| 56 | Քոչարյան Լիդա Կամոյի | Ավագ. լաբ | | 45.5 |
| 57 | Սուխուդյան Գոհար Աշոտի | Գիտ. Աշխ. | | 89.6 |
| 58 | Ասլանյան Աիդա Մարտիրի | Գիտ. Աշխ. | | 45.5 |
| 59 | Խոստոյան Ֆլորա Արտաշի | Գիտ.աշխ. | | 89.6 |
| 60 | Սարգսյան Անահիտ Ալեքսանի | Առաջ. Գիտ.աշխ. | Ք.գ.թ. | 89.6 |
| 61 | Մանթաշյան Կորյուն Ադոլֆի | Լաբ.վարիչ | Տ.գ.թ. | 98.0 |
| 62 | Մանթաշյան Ստելլա Գեորգիի | Գիր. Աշխ. | | 45.5 |
| 63 | Դոնոյան Արուսյակ Թորգոմի | Ավ. Ճարտ. | | 89.6 |
| 64 | Եսայան Արսեն Ռազմիկի | Ավ.լաբորանտ | | 89.6 |
| 65 | Աբրահամյան Մերի Մարտինի | Գիտ. Աշխ. | | 92.6 |
| 66 | Զապրոսյան Արթուր Վլադիմիրի | Ավ.գիտ.աշխ | Ք.գ.թ. | 45.5 |
| 67 | Մանուկյան Ռիմա Վարազդատի | Լաբ.վարիչ | Տ.գ.թ. | 89.6 |
| 68 | Արսենյան Նաիրա Մերուժանի | Կրտ.գիտ. աշխ. | | 45.5 |
| 69 | Սահաարունյան սերգեյ Ալեքսանդրի | Լաբ. վարիչ | Տ.գ.թ. | 100.0 |
| 70 | Սարգսյան Անահիտ Մելքոնի | Գիտ. Աշխ. | | 89.6 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 71 | Առաքելյան Ալեքսանդր Միխայելի | Գիտ. Աշխ. | | 45.5 |
| 72 | Մակարյան Իրինա Մկրտիչի | Գիտ. Աշխ. | | 45.5 |
| 73 | Աղամյան Էլլադա Սմբատի | Գիտ. Աշխ. | | 89.6 |
| 74 | Առուստամյան Աննետա Գեորգիի | Գիտ. Աշխ. | | 89.6 |
| 75 | Նազարյան Էդիտա Մուշեղի | Ավ.գիտ. աշխ. | Ք.գ.թ. | 89.6 |
| 76 | Բագինովա Լյուսյա Գեորգիի | Ավ. Գիտ. Աշխ. | Տ.գ.թ. | 89.6 |
| 77 | Հարությունյան Գալինա Արտեմի | Ավ.գիտ. աշխ. | Տ.գ.թ. | 89.6 |
| 78 | Հայրապետյան Սուրեն Մուշեղի | Ավ.գիտ. աշխ | Ք.գ.թ. | 89.6 |
| 79 | Խաչատրյան Աննա Ալբերտի | Ավ. Գիտ.աշխ | Տ.գ.թ. | 89.6 |
| 80 | Ազնաուրյան Ասյա Նիկողոսի | Գիտ. աշխ | | 45.5 |
| 81 | Էդիլյան Կարեն Նորայրի | Կրտ. Գիտ. Աշխ. | | 89.6 |
| 82 | Հովսեփյան Արմեն Հովհաննեսի | Լաբ վար. | Տ.գ.դ. | 98.0 |
| 83 | Հակոբյան Ասյա Ռաֆայելի | Կրտ. Գիտ. աշխ | | 92.6 |
| 84 | Հարությունյան Սիրանուշ Աշոտի | Գիտ. Աշխ. | Տ.գ.թ. | 92.6 |
| 85 | Գասպարյան Ռուբեն Մկրտիչի | Կրտ. Գիտ. Աշխ. | | 92.6 |
| 86 | | Կրտ.գիտ. աշխ. | | 92.6 |
| 87 | Մարտիրոսյան Վարդան Գևորգի | Լաբ. վար. | Տ.գ.թ. | 95.0 |
| 88 | Ղազինյան Անահիտ Աբելի | Գիտ. Աշխ. | | 89.6 |
| 89 | Սարկիզովա Յուլյա Սարգսի | Գիտ. Աշխ. | | 89.6 |
| 90 | Հակոբյան Նինա Հավհաննեսի | Ավագ լաբոր. | | 89.6 |
| 91 | Հարությունյան Լևոն Վարդանի | Լաբ. վարիչ | Ե.գ.թ. | 120.0 |
| 92 | Դաշտոյան Եվգենյա Հենրիխի | Կրտ.գիտ.աշխ. | | 89.6 |
| 93 | Փաշայան Ռոմելա Արտավազդի | Ավագ գիտ. Աշխ. | | 45.5 |
| 94 | | Ավագ լաբ | | 92.6 |
| 95 | Մելիքջանյան Հասմիկ Միշայի | լաբորանտ | | 89.6 |
| 96 | Պողոսյան Մանուկ Արարատի | Խմբի ղեկ. | Տ.գ.թ. | 89.6 |
| 97 | Սարգսյան Մարինե Սեմյոնի | Ավագ լաբոր. | | 89.6 |
| Ընդամենը | | | | **8541.0** |

**Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝** _______________ ( Կ.Գրիգորյան )

(ստորագրություն) (անուն ազգանուն)

**Կազմակերպության անձնակազմի կառավարման բաժնի պետ՝** _______________ ( Ժ. Աբրահամյան )

(ստորագրություն) (անուն ազգանուն)